Աստուածածնի , զի արգելին խափան զպատարագն , եւ երրորդ՝ վասն Բեթղեհէմի եկեղեցւոյն և Այրին Ծննդեան , զի 'ի գնալ անդ ուխտաւորացն Հայոց՝ ոչ բանային զդըրունս նոցա և անարգանօք դարձուցանէին զնոսա յետս ։ Խնդրեաց Թէոդորոս նաեւ հանրագիր յայլազգեաց Երուսաղէմի վասն սոցին իրաց , այլ նոքա ոչ առին յանձն , ակն ածեալ 'ի տրոցն Յունաց ։ Յետ այսր ամենայնի գըրեաց Թէոդորոս Պատրիարք առանձին , և միաբանք վանաց առանձին հանրագիր առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս՝ յայտ առնելով զանտանելի նեղութիւնս իւրեանց զոր կրէին յօտարաց , զի մինչեւ ցայն վայր մնացեալ նոցա առանց հրովարտակի , այլազգիք և Ֆէլլահք կողոպտէին զնոսա , զի բաց 'ի սովորական տրոց (դրամոց և աւանելեաց) պահանջէին դարձեալ մուշտակ , ջուխայ կօշիկ և գուլպայ ։ Յետ առնլոյ զսահմաննեալ գլխահարկն, առին նաեւ 9500 դահեկան կոտոր կամ փէսս ասելով ։ Այլ վասն Կուսակալին՝ Դատաւորին՝ Քաղաքապետին Ցօպպէի Մէհէմմէտ Ապուլօպութին և այլոց՝ չիք ինչ ասել , զի ակներեւ ունէին տեսանել 'ի տումարին՝ զոր առաքեցին առ ազգայինս , զի իւրաքանչիւր ամի չէր բաւական նոցա 500 քսակս արծաթոյ , որոյ վասն խորհէին հանապազ և ոչ կարէին գտանել զելս իրաց ․ վասն զի հոգք պատրաստելոյ զտարեկան պարէն վանաց ․ գալուստ նոր Դատաւորի և Կուսակալին՝ հատուցումն տոկոսեաց պարտուց , և ինքեանք կային 'ի յետին չքաւորութեան ։ Գըպթիք յուսահատեալ 'ի Հայոց դարձան առ Յոյնս , զի ձրի շինեցին ասէին զտեղիս մեր , և վասն մասնաւոր տրոց ինչ պահանջէին զհաշիւ , որ և ետուն զայն՝ և նոքա լռեցին ։ Ապա չերկարելով զբանս՝ առաքեցին 'ի Կոստանդինուպօլիս զԳաբրիէլ վարդապետ , զի իբրեւ կենդանի գիր պատմեսցէ նոցա զամենայն անցս Երուսաղէմի ․ և ապա աղաչէին տնօրինել զարժանն և ծանուցանել ինքեանց ․ զի 'ի սէր Ս․ Տեղեաց մնացեալ անդ հասին տառապանաց և վշտաց , վտանգեցաւ տունն , աղարտեցաւ պատիւ ազգին ․ զի արհամարհեալ իմն էին Հայք յաչս այլազգեաց և այլոց ․ Թէպէտ և խորհեցան միաբանք խօյս տալ յԵրուսաղէմէ և դէպ ուղիղ գնալ 'ի Կոստանդինուպօլիս՝ և կամ յայլ ուր ,